# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 077-Ա

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 26.06.2024ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 091-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Նորմատիվ իրավական ակտերի>> մասին օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Արենի համայնքի ավագանու 26.06.2024թվականի << Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 2,41898հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը վարձակալությամբ <<Կվարցիտ>> ՍՊԸ-ին հատկացնելու մասին>> թիվ 091-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ.

Որոշման տեքստը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ.

1. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 2,41898հա հողամասը (ծածկագիրը՝ 10-025-0106-0053, գործառնական նշանակությունը ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի, հասցեն Արենի, Խաչիկ Կվարցիտի 1-ին թաղամաս 3) մինչև թույլտվության ժամկետի ավարտը, 20 տարի ժամկետով հատկացնել վարձակալությամբ <<Կվարցիտ>> ՍՊԸ-ին՝ հաշված 14. հունիսի 2024թվականից: Տարեկան վարձավճարը սահմանել հողամասի անշարժ գույքի հարկի դրույքաչափից ոչ պակաս՝ 6 000 000 ՀՀ դրամ և յուրաքանչյուր արդյունահանված օգտակար հանածոյի 1 տոննայի հաշվարկով 1000 ՀՀ դրամ:

2. Տարեկան վարձավճարի 6 000 000 ՀՀ դրամ գումարը վճարվում է հավասար պարբերականությամբ՝ ըստ ամիսների: Յուրաքանչյուր ամսվա վարձավճարը վճարվում է մինչև հաջորդող ամսվա 15-ը:

3. Արդյունահանված օգտակար հանածոների համար վճարումները կատարվում են մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 20-ը ներառյալ՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից ստացված հաշվետվությունների հիման վրա:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**